

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ. ՓՈԲՐ ՀԱՄԱՅՆՔ, ՄԵԾ ՆԵՐՈՒԺ

Մերզեյ Սումյուննի

Չեխիայի հայ համայնքը փոքրաթիվ է: Երկրում ապրող հայերի թիվը շատ քիչ է գերազանցում 1000 մարդը: Եվ այնուամենայնիվ, հայ համայնքը Չեխիայի Հանրապետությունում զարգացման հաջողություններ գրանցած համայնքներից է: Հայ համայնքի անդամներն ակտիվ սոցիալական կյանք են վարում, խիստ ամուր են ներհամայնքային սոցիալական կապերը: Համայնքի անդամները բավական հաջող են ինտեգրվում չեխական տնտեսությանը, երկրում ապրող հայերի մեծամասնությունը զբաղվում է փոքր բիզնեսով: Հայ համայնքի հիմնախնդիրներից է այն, որ Հայաստանը դիվանագիտական ներկայացուցչություններ չունի Չեխիայում, որոնք կարող էին իրավաբանական և այլ աջակցություն ցուցաբերել համայնքի անդամներին: Եվ Չեխիայի հայերն իրենք են լուծում իրենց առջև ծառացող խնդիրները:

Չեխիայի հայ համայնքը փոքրերից մեկն է ոչ միայն աշխարհում, այլև նույնիսկ Արևելյան Եվրոպայում: 2005թ. դրությամբ այստեղ ապրում էր ընդամենը 1046 հայ, ինչը կազմում է հանրապետությունում ապրող օտարերկրացիների ընդհանուր թվի 0,42%-ը [1, s. 86]¹: Չեխիայում նույնիսկ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ չկան. երկիրը մտնում է այն հյուպատոսական տարածքի մեջ, որի համար պատասխանատու է Ավստրիայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունը: Այնուամենայնիվ, Չեխիայի հայ համայնքի հետազոտությունը խիստ հետաքրքրական է եվրոպական երկրների այլ հայ համայնքների համեմատ իր չափազանց ինքնատիպ լինելու պատճառով:

Թեև Չեխիան (ի տարբերություն, օրինակ, Լեհաստանի, որտեղ հայ

¹ Հարկ է ընդգծել, որ այս թիվը ներառում է Չեխիայում ապրող և հայաստանյան անձնագիր ունեցող մարդկանց: Չեխիայում ապրող, բայց այլ երկրների (Ռուսաստան, Իրան, Թուրքիա, ԱՄՆ և այլն) քաղաքացիություն ունեցող էթնիկ հայերին վիճակագրական ծառայությունը համարում է համապատասխան երկրների ներկայացուցիչներ: Ի դեպ, ի տարբերություն, օրինակ, Գերմանիայի, որտեղ հնարավոր է գերմանական քաղաքացիություն ստանալ նախորդ քաղաքացիությունից հրաժարվելու պես գրեթե միաժամանակ, չեխական օրենսդրությունը երկար ժամանակ թույլ էր տալիս պահպանել նախկին քաղաքացիությունը (այժմ նման հնարավորություն չկա): Ուստի առաջարկվող պաշտոնական տվյալները, թեև ճիշտ չեն ներկայացնում Հայաստանից ներգաղթի թվի ցուցանիշները, այնուամենայնիվ, կարող են քիչ թե շատ վստահելի համարվել [1, s. 86]:

համայնքը մի քանի դար շարունակ եղել է մեծաթիվ և բավական պատկառելի մեծաթիվ հայ բնակչություն ունեցող երկիր չէր, սակայն վերջին 50 տարիներին հայերի (հատկապես Հայաստանում և Խորհրդային Միության այլ հանրապետություններում ապրող) առնչությունները Չեխիայի հետ էապես հեշտացվեցին, օրինակ, Ֆրանսիայի կամ ԱՄՆ-ի համեմատ: Ձգալի թվով հայեր Չեխիայի Հանրապետություն էին այցելում իբրև զբոսաշրջիկներ և գործնական, ինչպես նաև բարեկամական կապեր էին հաստատում այն ժամանակ դեռևս Չեխոսլովակիայի քաղաքացիների հետ: Խորհրդային Միության և Վարշավայի պայմանագրի կազմալուծմանը հաջորդեց Չեխիայի ինտեգրումը եվրոպական տնտեսական-քաղաքական համակարգում, ինչը երկիրը բավական գրավիչ դարձրեց նախկին ԽՍՀՄ երկրներից արտագաղթողների համար: Ընդ որում՝ Արևմտյան Եվրոպայի երկրների միգրացիոն օրենսդրության համեմատ Չեխիայի օրենսդրությունը բավական լիբերալ էր, ինչն էլ ներգաղթը Չեխիա, ի տարբերություն Ֆրանսիայի կամ Գերմանիայի, դարձնում էր ավելի քան իրական:

Ի տարբերություն ԱՄՆ, Ֆրանսիա կամ այլ արևմտյան երկրներ ներգաղթող անձանց, ովքեր խիստ աղոտ պատկերացում ունեին նոր երկրի կյանքի մասին, Չեխիա էին գալիս մարդիկ, ովքեր ծանոթ էին այդ երկրին: Չեխիայում բնակություն հաստատող ներգաղթյալների գրեթե կեսը մինչ այդ եղել էր այստեղ մեկ կամ մի քանի անգամ՝ իբրև զբոսաշրջիկ կամ գործուղվել էր գործի բերումով: Երկրում բնակություն հաստատած հայերի մոտ 40%-ը Չեխիայի և չեխերի հետ առնչվել էր դեռևս Խորհրդային Միության տարիներին: Որոշ հետազոտողներ ընդգծում են, որ Չեխիա գաղթած հայերի սերտաճումը բավական թեթև էր ընթանում՝ կապված այն գործոնի հետ, որ լինելով նախկին սոցճամբարի երկիր՝ Չեխիան Արևմտյան Եվրոպայի երկրներից «ավելի ընկալելի» էր հայերի համար [2, p. 8]¹:

Հատկապես պետք է նշել 1970-ական թթ. ստեղծված հատուկ իրավիճակի մասին՝ կապված դեպի Չեխիա և այնտեղից միգրացիոն հոսքերի հետ: Արևմտաեվրոպական երկրների հետ չեխական մշակույթի մերձավորությունը, ինչպես նաև նույնիսկ խորհրդային ժամանակներում երկրից արտագաղթելու հնարավորության առկայությունը նպաստում էին, որպեսզի բավական մեծ թվով չեխեր գաղթեն Արևմուտքի երկրներ: Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության գոյության ընթացքում ապագա Չեխիայի տարածքը լքել է մոտ 400 հազար մարդ, որոնց մեծ մասը մտավորականներ էին, ինժեներներ, արվեստի ու մշակույթի գործիչներ [2, p. 6]: Վարշավայի պայմանագրով միավորված դաշինքի կազմալուծումը և Արևմ-

¹ Այսպես, Յան Չերնիկը գրում է. «Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից և Հարավսլավիայից գաղթողները Չեխիայում հանդիպում էին սոցիալիզմի ժառանգության, որը նման էր հայրենիքում իրենց ծանոթ իրավիճակին: Դա հեշտացնում էր նրանց հարմարվելը նոր կյանքին» [2, p. 8]:

տյան Եվրոպայի երկրներ չեխերի արտագաղթի վերջին սահմանափակումների վերացումն էլ ավելի սրեցին միգրացիոն իրավիճակը երկրում. միայն 1992-93թթ. և միայն Գերմանիա Չեխիայից հեռացավ երկրի աշխատուժի 1,2%-ը [2, p. 7]: Բարձրորակ աշխատուժի առաջացած պակասորդը ծածկելու համար Չեխիան ավելի ազատական դարձրեց իր միգրացիոն քաղաքականությունը, քան արևմտաեվրոպական երկրները: ԽՍՀՄ նախկին հանրապետությունների քաղաքացիներին երկիրը պատրաստ էր առաջարկել ավելի լավ կենսապայմաններ, քան նրանց հայրենիքում էր: Հենց 1990-ական թթ. սկզբից դեպի Չեխիա միգրացիոն հոսքերում կտրուկ սկսեցին գերիշխել նախկին ԽՍՀՄ հանրապետությունների քաղաքացիները, այն դեպքում, երբ մինչև 1991թ. Չեխիա եկող օտարերկրացիների մեջ առաջին տեղը պահպանում էին Վիետնամից և Չինաստանից եկածները: Այս ժամանակվանից սկսած էլ կարելի է խոսել Չեխիա հայերի արտագաղթի մասին: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ներկայացուցիչների մեջ հայերը գրավում են չորրորդ տեղն ուկրաինացիներից, ռուսներից և բելառուսներից հետո: Այսպիսով, հայերը նախկին ԽՍՀՄ քաղաքացիների առավել մեծաթիվ ոչսլավոնական խումբն են Չեխիայում: Երկրի հայ համայնքի կառուցվածքային պատկերն ըստ վերջին տվյալների, որ հրապարակել է Չեխիայի վիճակագրական հետազոտությունների ինստիտուտը (2004թ. դրությամբ), այսպիսին էր. 645 հայեր երկրում ապրում էին ոչ ավելի, քան 90-օրյա հրավերքով, ինչը լիակատար բնակության իրավունք չի տալիս, բայց մոտ է դրան [3]: Եվս 405 մարդ երկրում էր գտնվում երկարատև ապաստան ստանալու հիման վրա [4]: Երկարատև բնակության իրավունքով Չեխիայում ապրող հայերի բաժինը (61,4%) ամենամեծերից մեկն է մյուս էթնիկական խմբերի համեմատությամբ. ամենաբարձր ցուցանիշներ ունեն միայն խորվաթները (67%) և ռումինացիները (75%) [2, p. 11]:

Իրենց հերթին, հայ ներգաղթյալների երկու հիմնական խմբերը բաժանվում էին հետևյալ ենթախմբերի՝ ըստ միգրացիոն փաստաթղթերի ստացման հիմքերի.

Աղյուսակ 1

Չեխիայում հայերի մշտական բնակության իրավունք ստանալու հիմքերը 2004թ., դեպքերի քանակը (Չեխիայի վիճակագրական ինստիտուտի տվյալները)

Ծնվել են Չեխիայում	Հումանիտար պատճառներ (չի պարզաբանվում)	Ընտանիքին միանալը (ընտանիքի անդամներից մեկը Չեխիայի քաղաքացի է)	Ընտանիքին միանալը (ընտանիքի անդամներից ոչ մեկը Չեխիայի քաղաքացի չէ)	Մշտական բնակության իրավունք՝ ստացված երկրում 10 տարի ապրելուց հետո	Մշտական բնակության իրավունք՝ ստացված երկրում 8 տարի ապրելուց հետո	Այլ պատճառներ
2	44	169	404	8	2	16

Աղյուսակ 2

Հայերի երկարաժամկետ (ավելի քան 90 օր) չեխական հրավերք ստանալու հիմքերը 2004թ., դեպքերի քանակը (Չեխիայի վիճակագրական ինստիտուտի տվյալները)

Բիզ- նեսի վա- րում Չե- խա- յում	Մասնակ- ցություն Չեխիայում գրանցված ընկերու- թյան կա- պիտալում	Աշխա- տանք Չեխիա- յում	Ուսում Չեխիա- յում	Ընտանի- քին միա- նալը (ըն- տանիքի անդամ- ներից մեկը Չեխիայի քաղաքացի է)	Ընտանի- քին միա- նալը (ըն- տանիքի անդամնե- րից ոչ մեկը Չեխիայի քաղաքացի չէ)	Փաստաթղ- թերի հանձ- նում փախս- տականի կարգա- վիճակ ստանալու համար	Այլ պատ- ճառներ
75	62	118	15	2	108	16	9

Աղյուսակ 3

Չեխիայում փախստականի կարգավիճակ ստանալու համար հայտարարություն տված քաղաքացիների հիմնական խմբերը¹

Տարբեր երկրների քաղաքացիների բաժինը փախստականի կարգավիճակ ստանալու փաստաթղթեր հանձնողների մեջ, 2005թ.		Տարբեր երկրների քաղաքացիների բաժինը փախստականի կարգավիճակ ստանալու փաստաթղթեր հանձնողների մեջ, 2006թ. հոկտեմբեր	
1. Ուկրաինա	25%	1. Ուկրաինա	16%
2. Սլովակիա	18%	2. Իրաք	11%
3. Հնդկաստան	9%	3. Ռուսաստան	11%
4. Չինաստան	7%	4. Բելառուս	8%
5. Ռուսաստան	6%	5. Նիգերիա	6%
6. Բելառուս	5%	6. Չինաստան	5%
7. Վիետնամ	5%	7. Ղազախստան	5%
8. Մոնղոլիա	3%	8. Մոնղոլիա	4%
9. Նիգերիա	2%	9. Կուբա	4%
10. Մոլդովա	1%	10. Շրի Լանկա	3%
13. Հայաստան	1%	13. Հայաստան	2%

Արժե հատկապես խոսել ներգաղթողների այն խմբի մասին, ովքեր հավակնում են ստանալ փախստականի կարգավիճակ: Քանի որ Հայաստանը ժողովրդավարական երկիր է՝ դինամիկ զարգացող տնտեսությամբ, այն չի մտնում այն պետությունների մեջ, որոնց քաղաքացիները կարող են Եվրամիությունում փախստականի կարգավիճակ ստանալու հույս ունենալ: Այսպես, 1991-2003թթ. ընթացքում Չեխիայում փախստականի կարգավիճակ ստանալու հայտ ներկայացրած 3093 հայերից միայն 149 մարդ (4,8%) է ստացել այդ կարգավիճակը [1, s. 48]: Այնուամենայնիվ, չնայած այդ կարգավիճակն ստանալու փոքր հավանականությանը, 2005-2006թթ. փախստականի կարգավիճակ ստանալուն հավակնող օտարերկրացիների մեջ հայերի բա-

¹ Տվյալները ներկայացված են ըստ Չեխիայի վիճակագրական ինստիտուտի զեկույցների [5]:

Ժինն ավելացել է 1%-ից 2%-ի: Ի դեպ, հայերը, միևնույն է, այս խմբի մեջ խիստ աննշան մասն են կազմում, ինչը երևում է *Աղյուսակ 3-ում*:

Ի տարբերություն փախստականի կարգավիճակի, Չեխիայի քաղաքացիություն հեշտությամբ ստանում են շատ հայեր. միայն 1999-2003թթ. ընթացքում Չեխիայի քաղաքացիություն է ստացել Հայաստանից Չեխիա եկածների ավելի քան 10%-ը: Չնայած այն բանին, որ 1999թ. սկսած՝ նկատվում է քաղաքացիություն տալու դեպքերի թվի նվազման որոշակի շարժ, առաջին հերթին անհրաժեշտ է նշել, որ հայերի՝ Չեխիա արտագաղթը բարձրակետին է հասել 1990-1992թթ., իսկ Չեխիայի օրենսդրությանը համապատասխան՝ չեխական անձնագրերի տրամադրումը ամենաբարձր ցուցանիշին է հասել 8-10 տարի անց՝ 1999-2000թթ.¹:

Չեխիայի քաղաքացիություն ստացած ներգաղթյալների մեջ հայերի թիվը զգալիորեն փոքր է Չեխիայում ապրող ներգաղթյալների ընդհանուր քանակում հայերի թվի համեմատությամբ: Աղյուսակից հստակ երևում է նաև, որ Ժամանակի ընթացքում ավելի մեծ թվով հայեր են ստացել անձնագրեր ոչ որպես փախստականներ:

Աղյուսակ 4

Հայերի չեխական քաղաքացիություն ստանալու և քաղաքացիության տրամադրման դեպքերի դինամիկան 1999-2003թթ. [2, p. 16]

1999թ.	2000թ. ընդա- մենը	2000թ. միայն փախս- տական- ներ	2001թ. ընդա- մենը	2001թ. միայն փախս- տական- ներ	2002թ. ընդա- մենը	2002թ. միայն փախս- տական- ներ	2003թ. ընդա- մենը	2003թ. միայն փախս- տական- ներ
40	36	28	20	9	8	2	18	7

Չեխ ուսումնասիրողները նշում են, որ հայերն ամենահուսալի ազգային փոքրամասնություններից են [2, p. 43]: Հայերը, ինչպես և այլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հիմնականում ապրում են Պրահայում. այստեղ է բնակվում Չեխիայի հայ համայնքի անդամների մոտ 80%-ը: Հայ սփյուռքի մեկ այլ կենտրոն է Բրնոն (այստեղ բնակվում է մոտ 200 հայ): Երրորդ քաղաքը, որտեղ ևս հայեր են բնակվում, Գերմանիային սահմանակից Լաբեի Ուստի ոչ մեծ քաղաքն է: Այստեղ ապրում են 5 հայ ընտանիքներ [6, s. 3].

Չեխիայի հայ համայնքի հիմնական մասը կազմում են այն ընտանիք-

¹ Չեխիայի գործող օրենսդրության համաձայն՝ քաղաքացիություն ստանալու համար օտարերկրացին երկրում պետք է ապրի 5 տարուց ոչ պակաս, բայց 15 տարուց ոչ ավելի (սովորաբար առաջին 5 տարիներն օտարերկրացին ապրում է Ժամանակավոր իրավերթով, որն այնուհետև փոխարինվում է մշտական բնակության իրավունքով), այդ ընթացքում չենթարկվի քրեական և քաղաքացիական պատասխանատվության, ինչպես նաև պետք է բավարար չափով տիրապետի չեխերենին:

ները, որոնք այստեղ են տեղափոխվել 1990-1993թթ.: Չեխիայի ներքին գործերի նախարարության փորձագետ, էթնիկ միգրացիայի հարցերով զբաղվող Յարոսլավ Մարոուշեկի կողմից հարցման ենթարկված հայերի 18%-ը հայտարարել է, որ արտագաղթի գլխավոր պատճառ է հանդիսացել սոցիալական անապահովությունը հայրենիքում: 16%-ի համար հայրենիքից հեռանալու պատճառ է հանդիսացել իրենց երեխաներին ապահովված երկրում մեծացնելու ցանկությունը: 8%-ի խոստովանությամբ՝ արտագաղթն ընտրվել է իբրև բանակում ծառայելուց խուսափելու միջոց, նույնքան մարդիկ հայտարարել են հայրենիքում քաղաքական հետապնդումների ենթարկվելու մասին¹ [6, s. 9]: Եվս 2%-ի դեպքում Հայաստանից արտագաղթի պատճառ է նշվել հայ-ադրբեջանական խառնամուսնությունը, ինչը դժկամությամբ է ընդունվել շրջապատի կողմից: Հարցման ենթարկված մյուս ներգաղթյալները կամ չեն կարողացել ձևակերպել իրենց գաղթելու պատճառները, կամ էլ միանգամից մի քանիսն են նշել:

Իր զեկույցում Մարոուշեկը նշում է, որ Հայաստանից գաղթածներից շատերի համար Չեխիան մի երկիր է, որտեղ նրանք երկար մնալ չեն պատրաստվում: Չեխիայում բնակություն հաստատած հայերի մոտ երկու երրորդը սկզբում անհաջող փորձել է հաստատվել ԱՄՆ-ում կամ արևմտաեվրոպական երկրներում: Չեխիան ընտրվում էր այն հաշվարկով, որ երկրի ինտեգրումը Եվրամիությանը կհեշտացնի հնարավոր տեղափոխությունը ցանկալի երկիր: Առավել հաճախ որպես հետագա միգրացիայի նպատակ հարցման ենթարկվածները նշում էին Ավստրիան, Բելգիան, Գերմանիան, Հոլանդիան և Ֆրանսիան:

Չեխական հասարակությանը հայ համայնքի տնտեսական ինտեգրումն ընթանում է բավական ինքնատիպ ձևով (տե՛ս *Աղյուսակ 5*): Հայերի մեծամասնությունը սեփական բիզնես ունի. հայերն ունեն ոչ մեծ մթերային խանութներ, կոշիկի, կարի արհեստանոցներ և այլն: Տարածված է նաև ոսկերչական բիզնեսը: Չեխիայի հայերի մեջ խիստ փոքր թիվ են կազմում գործազուրկները՝ 5%-ից քիչ: Հատկանշական է, որ վարձու աշխատող հայերի միայն կեսն է աշխատում չեխական ընկերություններում, մնացած հայերը, աշխատանքի շուկայում որպես վարձու աշխատողներ հանդես գալով, կա՛մ օտարերկրյա, կա՛մ ձևականորեն չեխական, բայց հայ ղեկավարություն կամ հայկական աշխատանքային կոլեկտիվ ունեցող ընկերությունների աշխատակիցներ են [6, s. 22]:

¹ Հարկ է նշել, որ «քաղաքական հետապնդումներն» իբրև արտագաղթի պատճառ նշող օտարերկրացիների թիվն ավանդաբար մեծ է Եվրոպայում՝ անկախ այն բանից, թե որ երկրից են նրանք, և որքանով է նրանց հայտարարած պատճառը համապատասխանում իրականությանը: Հաճախ քաղաքական հետապնդումների փաստերը, ավելի մանրակրկիտ ուսումնասիրության դեպքում, չեն հաստատվում, սակայն գաղթողների մեջ տարածված է այն պատկերացումը, թե քաղաքական փախստականներն ավելի արագ և հեշտ են ապաստան ստանում:

Աղյուսակ 5

Չեխիայում ապրող հայերի զբաղվածության տեսակները

Անհատ ձեռներեցներ		41%
Վարձու աշխատողներ	Չեխական ընկերությունում	13%
	Օտարերկրյա ընկերությունում	4%
	Հայերի գերազանցությամբ ընկերությունում	9%
Ուսանողներ		8%
Գործազուրկներ		5%
Տնային տնտեսուհիներ		5%
Թոշակառուներ		10%
Երեխաներ		5%

Հետաքրքիր է այն փաստը, որ, վիճակագրության համաձայն, զբաղվածության այս հարաբերակցությունն ուղղակի հակադրությունն է այն զբաղվածության, որ ունեին հայ ներգաղթյալները մինչև Հայաստանից Չեխիա տեղափոխվելը:

Աղյուսակ 6

Ներկայումս Չեխիայում ապրող հայերի զբաղվածությունը մինչև Չեխիա տեղափոխվելը [6, s. 22]

Վարձու աշխատողներ	62%
Անհատ ձեռներեցներ	5%
Գործազուրկներ	9%
Ուսանողներ	7%
Չէին աշխատում տարիքի պատճառով (երեխա/թոշակառու)	17%

Որպես հայ համայնքի սոցիալ-տնտեսական առանձնահատկություն չէիս հետազոտողները նշում են, այսպես կոչված, «կլիենտելիզմը» կամ արտաիրավական հարաբերությունները համայնքի ներսում. համայնքն ապրում է ներփակ կյանքով, մեծ է սոցիալ-տնտեսական ներհամայնքային կապերի թիվն այն դեպքում, երբ դրանք գրեթե լրիվ բացակայում են համայնքից դուրս, մեծ թվով գործարքներ իրականացվում են համայնքի ներսում՝ առանց դրանք իրավական դաշտում գրանցելու (օրինակ՝ աշխատողներ են վարձվում առանց աշխատանքային պայմանագիր կնքելու, կանխիկ խոշոր գնումներ են կատարվում՝ առանց գնման փաստը գրանցելու և այլն): Նախկին Խորհրդային Միության հանրապետություններից գաղթածների շրջանում առավել տարածված կլիենտելիզմը մի կողմից՝ հարմար ձև է օտար երկրում կենցաղի կազմակերպման համար (կլիենտելիզմը երաշխավորում է համայնքի անդամների համար սովորական կապերի պահպանումը և փոխօգնությունը նոր պետության մշակութային առումով օտար պաշտոնյաների նվազագույն միջամտության դեպքում), մյուս կողմից՝ նպաստավոր հող է ստեղծում չարաշահումների համար (դրամաշորթություն, հա-

մայնքի սոցիալապես առավել չպաշտպանված անդամների շահագործում և այլն): Չեխիայի ՆԳՆ փորձագետ Յան Չերնիկի կարծիքով՝ երկրի ազգային փոքրամասնությունների մեջ կլիենտելիզմն առավել մեծ տարածում ունի ուկրաինացիների և վիետնամացիների շրջանում, սակայն հայ համայնքում ևս դրա ցուցանիշները բարձր են միջին մակարդակից [2, p. 40]:

Հայ համայնքի երկրորդ խնդիրն անլեզու միգրացիայի հետ կապված իրավախախտումների բավական բարձր մակարդակն է՝ օտարերկրացիների այլ խմբերի համեմատությամբ: *International Organization for Migration*-ի աշխատակիցներ Դուշան Դրբոգլավի և Պետրա Եզեդդին-Լուկշիկովայի զեկույցի տվյալներով, որ նրանք պատրաստել էին Չեխիայի աշխատանքի նախարարության պատվերով, հայերը հինգերորդ տեղն են զբաղեցնում Էթնիկ խմբերի ներկայացուցիչների շարքում, որոնք բռնվում են չեխական սահմանն անլեզու անցնելու ժամանակ [1, s. 49]:

Այնուամենայնիվ, այս երկու փաստերը չեն կարող ստվեր գցել չեխական հասարակությունում հայերի ինտեգրման ընդհանուր առմամբ միանգամայն դրական պատկերի վրա: Չեխերը բավական լավ են վերաբերվում հայերին: Թե որքան կարևոր խնդիր է չեխական իշխանությունների համար հայ համայնքի (չնայած նրա փոքրաթիվ լինելուն) ինտեգրումը չեխական հասարակությանը, ցույց է տալիս հենց միայն այն փաստը, որ Չեխիայի կառավարության կողմից աջակցվող «Տանը՝ Չեխիայի Հանրապետությունում» կայքն ունի հայկական տարբերակ հիմնական՝ չեխական, ինչպես նաև անգլիական, ռուսական, ուկրաինական և վիետնամական տարբերակների կողքին¹: Եթե չեխերի և հայերի միջև ինչ-որ տարաձայնություններ լինում էլ են, ապա դրա պատճառն ամենից հաճախ չեխերի ավանդական զգուշավոր վերաբերմունքն է օտարերկրացիների հանդեպ [տե՛ս, օրինակ, 8]: Շատ ուսումնասիրողներ նշում են, որ այդ վերաբերմունքն ավելի հաճախ ձևավորում են չեխական լրատվամիջոցները, որոնք ավելի պահպանողական են և օտարատյաց, քան չեխական հասարակությունը: Այսպես, աշխատանքի ընդունելիս օտարերկրացիների հանդեպ կիրառվող խտրականության դեպքերը չեխական մամուլում ներկայացվում են այնպես, իբր հենց այդպես էլ պետք է լիներ: Ավելին, գաղթի վերաբերյալ հոդվածների մեծ մասն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կոչ է անում խստացնել միգրացիոն օրենսդրությունը: Լրագրողները գերադասում են ներգաղթյալներին ներկայացնել իբրև հանցավորության աճի աղբյուր և սպառնալիք էթնիկ չեխերի աշխատատեղերի նկատմամբ [տե՛ս, օրինակ, 9]:

Հայ ներգաղթյալների բնակության պայմանները Չեխիայում բավական բնորոշ են նաև տեղի բնակչության համար: Գաղթյալների գրեթե կեսը բնակարան է վարձում, մեկ քառորդն ունի սեփական տուն կամ բնակարան:

¹ Հայկական տարբերակի հասցեն է՝ <http://www.am.domavcr.cz/>

Աղյուսակ 7

Հայ գաղթյալների բնակության պայմանները Չեխիայում [6, s. 32]

Սեփական բնակարան	8%
Սեփական տուն	17%
Վարձակալում	48%
Փախստականներին տեղավորելու ծրագրով հատկացված կացարան	8%
Գործատուի տրամադրած կացարան	11%
Հանրակացարան	5%
Բնակություն ազգականների կամ բարեկամների մոտ	3%

Հայ համայնքի լեզվական ինտեգրումն ընթանում է հետևյալ կերպ. երկրում ծնված կամ իրենց ծնողների հետ Հայաստանից պատանի տարիքում հեռացած երեխաները սովորաբար չեխերենին տիրապետելու փայլուն արդյունքներ են ցույց տալիս, մինչդեռ ավագ սերունդը որոշ դժվարությամբ է սովորում նոր լեզուն: ՆԳՆ հետազոտությունների տվյալների համաձայն՝ հայ համայնքում չեխերենի տիրապետման մակարդակն ունի հետևյալ պատկերը [6, s. 28].

Աղյուսակ 8

Հայ գաղթյալների՝ չեխերենին տիրապետելու մակարդակը

Ազատ մակարդակ	31%
Միջին մակարդակ	42%
Թույլ մակարդակ	27%

Կարևոր դեր է խաղում այն փաստը, որ Հայաստանից գաղթածներն ազատ տիրապետում են ռուսերենին, որը պարտադիր դպրոցական առարկա էր չեխական դպրոցներում ընդհուպ մինչև 1980-ական թթ. վերջը: Մի կողմից՝ ծայրահեղ դեպքերում դա կարող է հեշտացնել չեխերի, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչների հետ հաղորդակցվելը, մյուս կողմից՝ չեխերենի և ռուսերենի նմանությունը երբեմն առիթ է դառնում չեխերենը չսովորելու՝ այն հույսով, որ կենցաղում չեխերենը կարելի է հասկանալ նաև միայն ռուսերեն իմանալով: Հարկ է առանձին նշել, որ սոցիոլոգիական հարցումների համաձայն՝ Չեխիայում ապրող հայերին առավել վրդովեցնող գործոններից է այն, որ նրանց ռուսների տեղ են դնում: Հարցման ենթարկված հայերի ներկայացմամբ՝ չեխերը նրանց մշտապես հարցնում են. «Հայաստանն արդյո՞ք Ռուսաստանի մասն է», «Հայերը կյուրեղյան գրերով են գրում», «Հայերը ռուսների տարատեսակ են» [6, s. 36]¹:

¹ Ի դեպ, նույն հարցման համաձայն՝ չեխերը հաճախ իրենց երկրում ապրող հայերին դնում են հույների, իսպանացիների, իտալացիների, հարավսլավացիների և նույնիսկ գնչուների տեղ: Այս դեպքերում, հավանաբար, դեր է խաղում այն, որ երկրի հայ համայնքը բավական սակավաթիվ է:

Կարելի է ասել, որ հայերին ռուսների հետ նույնականացնելուն նպաստում է նաև այն փաստը, որ իրենց փոքրաթվության պատճառով Չեխիայի հայերը հաճախ իրենց սոցիալական կյանքը «կառուցում» են ոչ միայն հայ համայնքի, այլև նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններից եկածների համայնքների հիման վրա՝ առաջին հերթին ռուսերենով ազատ հաղորդակցվելու շնորհիվ: Այնուամենայնիվ, ուսումնասիրողները նշում են, որ նախկին խորհրդային հանրապետությունների բոլոր ներկայացուցիչների մեջ հայերն ամենաքիչ մասնակցությունն ունեն «ռուսալեզու» հանրության կյանքին: Նրանք գերադասում են սոցիալական կապեր պահպանել կամ բացառապես հայկական խմբերի հետ, կամ ուղղակի ինտեգրվել չեխական հասարակությանը [2, p. 44]:

Ինչպես վերն արդեն նշվել է, Չեխիայում ապրող հայերի երեխաները չեխերենին տիրապետելու կայուն բարձր արդյունքներ ունեն: Երեխաների հաջող լեզվական սերտաճումը նրանց ծնողներին որոնել է տալիս մայրենի լեզվի նկատմամբ երեխաների հետաքրքրությունը խթանելու լրացուցիչ միջոցներ: Հայկական մշակույթի շրջանակներում երեխաների դաստիարակության հիմնական օջախը Պրահայի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետին կից գործող հայկական դպրոցն է, որի խնդիրն է երեխաներին մայրենի լեզու, գրականություն սովորեցնելը, մշակույթին ծանոթացնելը: Կամավոր պարապմունքները դպրոցում անցկացվում են շաբաթ օրերին, դասավանդում են (հասարակական հիմունքներով) Պրահայում տեղակայված «Ազատ Եվրոպա» ռադիոկայանի հայկական խմբագրության աշխատակիցները: Դպրոցի աշակերտներ են 6-14 տարեկան մոտ 40 երեխա: Դպրոցը պետության կողմից որպես ուսումնական հաստատություն հավաստագրված չէ և գրանցված է որպես հասարակական միություն [1, s. 51]:

Հարկ է նշել, որ Չեխիայի հայ համայնքի ներկայացուցիչները կրթական բավական բարձր մակարդակ ունեն, ինչը երևում է ստորև ներկայացվող աղյուսակից:

Աղյուսակ 9

Չեխիայում ապրող հայերի (ներառյալ երեխաները) կրթական մակարդակը [6, s. 31]

Բարձրագույն կրթություն	36%
Բուհի ուսանող	13%
Միջնակարգ կրթություն	31%
Միջնակարգ դպրոցի աշակերտ	3%
Ավարտել է նախակրթարան	7%
Նախակրթարանի աշակերտ	10%

Հետաքրքիր է այն փաստը, որ Չեխիայում բավական երկար ժամանակ ապրող հայերը խոստովանում են, թե չնայած պահպանվում է հայկական ընտանիքի համար ավանդական՝ երեխաների բարձրագույն կրթությունն ստանալու գերակայությունը, սակայն այդ կրթության ուղղվածությունը փոքր-ինչ փոխվում է: Այնպիսի ավանդական ուղղությունների կողքին, ինչպես տնտեսագիտության, իրավունքի և բժշկության ուսումնասիրությունն է, նախապատվությունը տրվում է նաև սոցիոլոգիային և փիլիսոփայությանը: Երկրում գրեթե չկան հայ ուսանողներ, ովքեր ընտրել են արևելագիտությունը (Հայաստանում այսօր մասնավորապես շատ են զբաղվում իրանագիտությամբ):

Ընդհանուր առմամբ, ինչպես նշում են հետազոտողները, զգալիորեն բարձր է հայերի մասնակցությունը Չեխիայի գիտական և մշակութային կյանքին, ինչն այնքան էլ սպասելի չէր՝ ելնելով հայ համայնքի փոքրաթվությունից: «Հայերի մասնակցությունը Չեխիայի մշակութային և հասարակական կյանքի ամենազանազան ոլորտներում բավական բազմազան է: Հայերը որպես կամավորներ (վոլոնտերներ) աշխատում են հասարակական կազմակերպություններում, դասավանդում են համալսարաններում և մասնակցում են Չեխիայում անցկացվող մշակութային փառատոների մեծ մասին: Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ հայերը մեծ համառությամբ և հաջողությամբ պայքարում են այն բանի համար, որ իրենց բարձր կրթամակարդակն ընդունվի Չեխիայում, ինչպես նաև առաջին հնարավորության դեպքում պատրաստակամությամբ և խանդավառությամբ ուսանում են չեխական համալսարաններում» [2, p. 43]:

Չնայած իր փոքրաթվությանը՝ Չեխիայի հայ համայնքն ավելի քան ակտիվ սոցիալական կյանք է վարում: Համայնքի ներսում կենտրոնացված կազմակերպության ստեղծման առաջին փորձը կատարվել է 1995թ. ձեռներեց Սերգեյ Գրիգորյանի կողմից, որը հիմնել է Չեխ-հայկական ընկերությունը: Նախատեսվում էր, որ կազմակերպությունը կմիավորի հանրապետությունում ապրող բոլոր հայերին և կզբաղվի չեխական հասարակության և հայերի փոխհարաբերությունների հարցերով. տեղեկատվական աշխատանքով, հայ փոքրամասնության իրավունքների պաշտպանությամբ և այլն: Բայց չեխ-հայկական ընկերության գործունեության արդյունքներն ավելի քան համեստ էին: Հիմնադրումից երկու տարի հետո արդեն ընկերության գործունեությունը, ելնելով անդամների փոքրաթվությունից, սահմանափակվում էր միայն Պրահայում: Ընկերությունն ամեն տարի կանոնավոր կերպով նշում է Օսմանյան կայսրությունում Հայերի ցեղասպանության տարելիցը, ուրիշ որևէ գործունեություն գրեթե չի ծավալում: Այնուամենայ-

նիվ, 2001թ. ընկերությանը հաջողվեց կազմակերպել Չեխիայի հայերի հանդիպումը Վիեննայում Հայաստանի հյուպատոսի հետ, ինչի շնորհիվ լուծվեցին Չեխիայի հայ համայնքի հետ Հայաստանի կառավարության փոխգործակցության մի շարք հարցեր:

Ավելի հաջողակ գտնվեց մեկ այլ հայկական կազմակերպություն՝ «Հայկական տուն քաղաքացիական ընկերակցությունը»: Կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ., այսօր այն ունի ավելի քան 60 անդամ: Ընկերակցության առանձնահատկությունն այն է, որ նրան կարող են անդամակցել ինչպես Չեխիայում, այնպես էլ Հայաստանում ապրող հայերը, ինչպես նաև, ինչը շատ կարևոր է, հայկական մշակույթով հետաքրքրվող չեխերը: Այսպես, կազմակերպությունն այսօր ունի 21 չեխ անդամ, ինչպես նաև 10 մարդ, ովքեր ո՛չ Չեխիայի, ո՛չ էլ Հայաստանի քաղաքացիներ չեն: «Հայկական տուն քաղաքացիական ընկերակցությունն» ակտիվ խորհրդատվական աշխատանք է տանում ներգաղթյալների շրջանում իրավական, առաջին հերթին՝ միգրացիոն օրենսդրության հարցերի վերաբերյալ: Ցանկացողներին օգնություն է ցուցաբերվում համակարգչով աշխատելու, ինչպես նաև այլ հմտություններ ձեռք բերելու գործում, ինչը թույլ կտա նրանց ունենալ ավելի բարձր վարձատրվող աշխատանք: 2002թ. ապրիլից ընկերակցությունը հրատարակում է «Նաիրի» ամսագիրը (մոտ 800 տպաքանակով), որում նույնպես արձարվում են ներգաղթողների իրավական պաշտպանության հարցերը:

«Նաիրիից» բացի, Չեխիայում լույս են տեսնում ևս երկու հայկական պարբերականներ: Առաջինը հայերեն լույս տեսնող «Օրեր» ամսագիրն է (700-900 տպաքանակով)¹: Այն լույս է տեսնում 1999թ. և տարածվում է ոչ միայն Չեխիայում, այլև Գերմանիայում, Ավստրիայում, Լեհաստանում և Ուկրաինայում: Այս ամսագրում ներկայացվում են ռեպորտաժներ աշխարհի այլ երկրների հայերի կյանքից՝ սկսած Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներից մինչև հարավամերիկյան պետությունները: Այժմ ամսագրի գլխավոր խմբագիրը Հակոբ Ասատրյանն է:

Մեկ այլ հետաքրքիր փորձ է մասամբ հայերեն, մասամբ չեխերեն անկանոն լույս տեսնող «Հայկական թերթ» (*Arménský list*) ավանախը, որի ստեղծման վրա աշխատում են Պրահայի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի ինչպես հայ, այնպես էլ չեխ ուսանողները: Ալմանախի բովանդակությունը բնորոշ է հումանիտար ֆակուլտետի ուսանողական

¹ Ամսագրի պաշտոնական կայքը կարելի է գտնել հետևյալ հասցեով. <http://www.orer.cz/ccontacts.html>. Ցավոք, կայքը բավարար չափով հագեցած չէ, բացի հայկական ռուսալեզու <http://www.openarmenia.ru> ֆորումին հղումից, ինչպես նաև ամսագրի մասին կարճ տեղեկատվությունից (ներառյալ վերջին համարների շապիկները), կայքում այլ տեղեկատվություն գրեթե չկա:

պարբերականներին. այստեղ կարելի է գտնել ռեպորտաժներ ուսանողների կյանքից, նոթեր, ինչպես նաև չեխերեն թարգմանություններ արտասահմանյան (առաջին հերթին՝ հայ) գրականությունից:

Հետազոտողների մեծ մասն ընդգծում է Չեխիայի հայ համայնքի և Հայաստանի միջև ամուր ու ակտիվ կապերի առկայության մասին: Յան Չերնիկն իր զեկույցում գրում է. «Հայ համայնքը զգալիորեն ավելի մեծ կապեր ունի հայրենիքում մնացած հարազատների ու բարեկամների հետ, քան Չեխիայում ապրող նորեկների այլ խմբերը: Հայերը կանոնավորապես ֆինանսական օգնություն են ցուցաբերում ինչպես Չեխիայում ապրող իրենց հայրենակիցներին, այնպես էլ Հայաստանում մնացած ազգականներին: Հայերի ամուր սոցիալական կապերը բնորոշ են նրանց ազգային ինքնությանը: Հայրենակցական և էթնիկ միությունների ստեղծումը դառնում է նոր սոցիալական կառույցների կայացման ձև: Շատ հայեր վրդովվում են՝ տեսնելով չեխական սոցիումի անդամների հարաբերություններին բնորոշ օտարոտիությունն ու սառնությունը: Ի տարբերություն չեխերի՝ հայերը ջանում են սերտ կապեր պահպանել իրենց հայրենակիցների հետ և տեղեկացված լինել իրենց բարեկամների ընտանիքներում տեղի ունեցող նորությունների մասին» [2, p. 43]:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ չնայած իր սակավաթվության պատճառով Չեխիայի հայ համայնքը չեխական պետության և նորեկների փոխհարաբերություններում հիմնական դերակատարներից չէ, բայց նրա նշանակությունը չի կարելի նվազեցնել: Հայ համայնքի ներկայացուցիչներն ավելի բարձր կրթամակարդակ ունեն, քան մյուս ներգաղթյալներն ընդհանուր առմամբ. իրենց կրթամակարդակը բարձրացնելու և երեխաներին լավագույն ուսում տալու նրանց ձգտումն ընդհանուր առմամբ ավելի բարձր է տեղի բնակչության նույն ցուցանիշի համեմատությամբ: Բոլոր հետազոտողները նշում են չեխական հասարակությանը հայ համայնքի ինտեգրման պատրաստակամության, նրա ներկայացուցիչների օրինապաշտության և սոցիալական ակտիվության բարձր մակարդակի մասին: Համայնքի անդամների տնտեսական գործունեությունը հիմնականում ծավալվում է անհատ ձեռնարկչության ասպարեզում: Չեխիայում ապրող հայերի գերակշիռ մասը զբաղվում է փոքր բիզնեսով (ոչ մեծ ընկերությունների տերեր կամ համատերեր են, աշխատում են սպասարկման կամ առևտրի ոլորտում): Հայ համայնքի հասարակական կազմակերպությունների, մամուլի օրգանների և մշակութային միությունների քանակական ցուցանիշներն ակնհայտորեն ավելի բարձր են, քան կարելի էր սպասել փոքրաթիվ այս սփյուռքից: Հայաստանի

հյուպատոսական ծառայության կողմից համայնքին ցուցաբերվող աջակցության թույլ մակարդակը (պայմանավորված նրանով, որ Չեխիայում չկան Հայաստանի Հանրապետության դեսպանություն և հյուպատոսություն) զգալիորեն փոխհատուցվում է երկրի տարածքում գործող հայկական կազմակերպությունների սոցիալական ակտիվությամբ: Փաստորեն, հայերի իրավական և սոցիալական աջակցության հարցերը լուծում է ինքը՝ համայնքը: Չնայած այն բանին, որ երկրում ապրող հայերի բավական մեծ մասը հնարավոր է համարում հետագայում Արևմտյան Եվրոպայի երկրներ տեղափոխվելը, չեխական իշխանությունները համայնքի ներկայացուցիչներին միանգամայն օրինապահ բնակիչներ են համարում և հոծարական նրանց Չեխիայի քաղաքացիություն են տալիս: Հայ համայնքը, հաջողությամբ ինտեգրվելով չեխական հասարակությանը, դրա հետ մեկտեղ կապեր է պահպանում Հայաստանում մնացած ազգականների և բարեկամների հետ՝ կենտրոնաեվրոպական երկրի հասարակությունը հայկական ավանդական արժեքներով (փոխօգնություն, ամուր սոցիալական կապեր, պարգևություն և սոցիալական ակտիվություն) հարստացնելու օրինակ հանդիսանալով:

Փետրվար, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Drbohlav D., Ezzeddine-Lukšíková P.* Výzkumná zpráva: Integrace cizinců v ČR. Studie arménské, vietnamské a ukrajinské komunity v Praze a Středočeském kraji // International Organization for Migration. Praha, 2003/2004.
2. *Černík J.* Active Civic Participation of Immigrants in the Czech Republic// Country Report prepared for the European research project POLITIS. Oldenburg, 2005.
3. [http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/915446C17D752140C1256E3200469742/\\$File/c01a23t.pdf](http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/915446C17D752140C1256E3200469742/$File/c01a23t.pdf)
4. [http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/54864F3E075C4AC8C1256E7E00400D1F/\\$File/c01a21t.pdf](http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/54864F3E075C4AC8C1256E7E00400D1F/$File/c01a21t.pdf)
5. Доклады статистического института Чехии [http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/2D4E335EF7DC7F51C1256E0C0030CD96/\\$File/c03a22t.pdf](http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/2D4E335EF7DC7F51C1256E0C0030CD96/$File/c03a22t.pdf) [http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/8E217F0D1569D439C1256E6F00597D9B/\\$File/c03a09t.pdf](http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/8E217F0D1569D439C1256E6F00597D9B/$File/c03a09t.pdf)
6. *Maroušek J.*, Arménští imigranti a jejich integrace do české společnosti (Výzkumná

- zpráva sestavená na základě etnografického terénního výzkumu ve vybraných lokalitách na území ČR). Univerzita Karlova v Praze, Filozofická Fakulta, Ústav etnologie, Praha, 2003.
7. *Brzáková P.*, Mariam - druhý rozhovor na téma jak žijí cizinky v České republice – <http://www.cizinci.cz/clanek.php?lg=1&id=203>
 8. *Bitrich T., Paleček J.*, Jak se v českém tisku diskriminuje, když se píše o zaměstnávání cizinců? http://aa.ecn.cz/img_upload/9e9f2072be82f3d69e3265f41fe9f28e/MKC_diskriminace_zam_ciz_2.pdf; Kozák K. Mediální analýza návrhu antidiskriminálního zákona. http://aa.ecn.cz/img_upload/9e9f2072be82f3d69e3265f41fe9f28e/Medi_ln_anal_za_antidiskrimina_n_ho_z_kona_clear.pdf; Křížková M. Média nemají paměť. Mediální konstrukce nedobrovolných sterilizací v České republice (2003-2006). http://aa.ecn.cz/img_upload/9e9f2072be82f3d69e3265f41fe9f28e/sterilizace1final.pdf
 9. *Bitrich T., Paleček J.*, Jak se v českém tisku diskriminuje, když se píše o zaměstnávání cizinců? http://aa.ecn.cz/img_upload/9e9f2072be82f3d69e3265f41fe9f28e/MKC_diskriminace_zam_ciz_2.pdf
 10. *Kozák K.*, Mediální analýza návrhu antidiskriminálního zákona. – http://aa.ecn.cz/img_upload/9e9f2072be82f3d69e3265f41fe9f28e/Medi_ln_anal_za_antidiskrimina_n_ho_z_kona_clear.pdf
 11. *Křížková M.*, Média nemají paměť. Mediální konstrukce nedobrovolných sterilizací v České republice (2003-2006). http://aa.ecn.cz/img_upload/9e9f2072be82f3d69e3265f41fe9f28e/sterilizace1final.pdf
 12. Доклады Чешского института статистики:
Počet cizinců s vízem nad 90 dní podle státního občanství a důvodu udělení víza – k 31.3.2004 – [http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/915446C17D752140C1256E3200469742/\\$File/c01a23t.pdf](http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/915446C17D752140C1256E3200469742/$File/c01a23t.pdf)
Počet cizinců s trvalým pobytem v ČR - podle státního občanství a důvodu povolení k pobytu k 31.3.2004 [http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/54864F3E075C4AC8C1256E7E00400D1F/\\$File/c01a21t.pdf](http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/54864F3E075C4AC8C1256E7E00400D1F/$File/c01a21t.pdf)
Počet žadatelů o azyl - podle státního občanství a kontinentu – 2005 [http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/2D4E335EF7DC7F51C1256E0C0030CD96/\\$File/c03a22t.pdf](http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/2D4E335EF7DC7F51C1256E0C0030CD96/$File/c03a22t.pdf)
Počet žadatelů o azyl - podle státního občanství a kontinentu - říjen 2006 – [http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/8E217F0D1569D439C1256E6F00597D9B/\\$File/c03a09t.pdf](http://www.czso.cz/ciz/cizinci.nsf/i/8E217F0D1569D439C1256E6F00597D9B/$File/c03a09t.pdf)

ЧЕШСКИЕ АРМЯНЕ – МАЛЕНЬКАЯ ОБЩИНА С БОЛЬШИМ ПОТЕНЦИАЛОМ

Сергей Сумленный

Резюме

Армянская община в Чехии имеет недавнюю историю – в отличие от соседней Польши, где армяне начали селиться еще в XIV веке, первое более или менее массовое переселение армян в Чехию состоялось лишь в конце XX века. Помимо граждан Армении, желавших переселиться именно в Чехию, эта страна стала также своего рода перевалочным пунктом для мигрантов, стремившихся попасть в страны Западной Европы, но пока не получивших въездных виз искомым стран. Многие мигрировавшие в Чехию граждане Армении имели определенные связи с Чехией и чехами еще в советское время, посещали ЧССР по туристической визе или в рамках рабочей командировки. В настоящее время в стране проживает более тысячи армян, большинство из которых сосредоточено в Праге.

Армянская община успешно интегрирована в социальную и экономическую жизнь страны. Уровень безработицы среди армян низок; около двух третей армян, живущих в стране, занимаются частным бизнесом; эксперты отмечают высокий образовательный уровень армян и их нацеленность на совершенствование своих знаний. Армяне стоят особняком среди мигрантов из бывших республик СССР, предпочитая интеграции в «русскоязычное» мигрантское сообщество прямую интеграцию в чешское общество. Некоторой проблемой при интеграции армян (как, впрочем, и для других мигрантов) в чешское общество является традиционный консерватизм чехов, порой переходящий в ксенофобию. Эксперты отмечают значительное количество публикаций в СМИ, разжигающих антимигрантские настроения. Тем не менее, армянская община является одной из самых благонадежных из всех групп иностранцев, проживающих в стране. Армянской общиной издается несколько газет и журналов, на базе Пражского университета ведется преподавание армянского языка детям армян, а также всем желающим.